

**Հաշվետվություն
Էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժնի
2018թ.**

Կատարվել են ամենօրյա սպասարկման աշխատանքներ այն բաժիններում, որտեղ առաջ են եկել որոշակի խնդիրներ՝ կապված համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի և ներքին ցանցի կամ Համացանցի աշխատանքի հետ:

Իրականացվել են համալսարանի ներքին ցանցի ընդլայնման և բարելավման աշխատանքներ: Ներքին ցանցի աշխատանքը բարելավելու նպատակով ցանցային հանգույցներ են տեղադրվել համալսարանի մասնաշենքերում՝ ըստ անհրաժեշտության: Փոխարինվել են վնասված մալուխները:

Հաշվետու ժամանակաշրջանում փոխարինվել են ֆիզիկապես և բարոյապես մաշված, ինչպես նաև՝ մեխանիկական վնասվածքներ ունեցող համակարգիչների պահեստամասերը, կատարվել է օպերացիոն համակարգի և անհրաժեշտ ծրագրային ապահովման տեղակայում: Արդյունքում ունենք լրիվ նոր և հզոր համակարգիչներ:

Կատարվել է համակարգիչների օպերացիոն համակարգերի և անհրաժեշտ ծրագրային փաթեթների վերածրագրավորում՝ ըստ անհրաժեշտության: Մասնավորապես՝ ամբողջապես վերակազմակերպվել և վերածրագրավորվել են թիվ 412 լսարանի՝ թվով 20, թիվ 210 լսարանի՝ թվով 12, թիվ 48 լսարանի՝ թվով 9 համակարգիչները: Նշված բոլոր լսարաններում վերատեղակայվել է ներքին ցանցը, ապահովվել է համացանցի հնարավորություն և ուսումնական նկատառումներով օգտագործվող NetOp School ծրագրային փաթեթ: Արդյունքում լսարանները համապատասխանացվել են համալսարանի ստորաբաժանումների կողմից ներկայացված կրթական պահանջներին: Բազմաթիվ ստորաբաժանումներում իրականացվել են տարբեր նպատակների համար ստեղծված հակավիրուսային ծրագրերի գործարկում, համակարգիչների ծրագրային ապահովման նորմալ աշխատանքի վերականգնում: Համալսարանում առկա բոլոր համակարգիչներում թարմացվել են հակավիրուսային ծրագրերը և նրանց լիցենզիաները:

Կատարվել է հաշվետու տարում համալսարանի կողմից ձեռք բերված համակարգչային տեխնիկայի և վերջիններիս համապատասխան ծրագրային միջոցների տեղակայում ըստ պահանջի:

Կատարվել է տեսապրոյեկտորների և ինտերակտիվ գրատախտակների վերակարգաբերում:

Իրականացվել է համալսարանի այլ սենյակներ տեղափոխված ստորաբաժանումների համակարգիչների մալուխային ցանցի կազմակերպում, վերջիններիս ներառում համալսարանի ներքին ցանցում:

Վերակազմակերպվել է թիվ 3 լսարանը՝ 12 հատ նոր համակարգիչներով, ներքին ցանցով, անհրաժեշտ տեղակայումներով և կարգաբերումներով, ինչպես նաև՝ համացանցի մատչելիությամբ WiFi կապի միջոցով:

Կազմավորվել է թիվ 8 լսարանը՝ 10 հատ նոր համակարգիչներով, ներքին ցանցով, անհրաժեշտ տեղակայումներով և կարգաբերումներով, ինչպես նաև՝ համացանցի մատչելիությամբ մալուխային կապի միջոցով: Լսարանում տեղակայվել է ուսումնական նկատառումներով օգտագործվող NetOp School ծրագրային փաթեթ:

Լեզուների ուսուցման կենտրոնում կազմակերպվել է համակարգչային կաբինետ՝ 7 հատ համակարգիչներով, ներքին ցանցով, անհրաժեշտ տեղակայումներով և կարգաբերումներով, ինչպես նաև՝ համացանցի մատչելիությամբ WiFi կապի միջոցով:

Ուսումնական գլխավոր մասնաշենքում լիովին վերակազմակերպվել է ներքին ցանցը, փոխվել են բոլոր մալուխները նորերով, բարձրացվել ներքին ցանցում աշխատանքի հուսալիությունը և համացանցի մատչելիության որակը:

Հեռավար ուսուցման կազմակերպում իրականացնելու համար տեղակայվել և կարգաբերվել է երկու հատ սերվերային համակարգ, որոնցից մեկը ծառայում է առցանց ուսուցման՝ p.vsu.am կայքի աշխատանքի համար, մյուսը՝ առցանց տեսադասի համակարգի աշխատանքն ապահովելու համար: Երկու համակարգերն էլ նախ տեղակայվել և թեստավորվել են ներքին ցանցում, լուծվել են առաջացած և

հնարավոր առաջացող խնդիրները, վերացվել են թերությունները, կատարվել է համակարգի աշխատանքի փորձարկում ներքին ցանցում:

Երկու համակարգերը փորձարկում անցնելուց հետո տեղակայվել են համացանցում, ապահովվել է նրանց հասանելիությունը, հայտնաբերվել և վերացվել են համացանցում աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրները և թերությունները: Համակարգերը բերվել են շահագործման համար պատրաստի վիճակի: Իրականացվել է ուսուցման համակարգերի թարմացում, նոր տարբերակի տեղադրում և համապատասխանեցում՝ արդեն գործող կայքի հետ:

Նշված բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո համակարգն անցել է փորձարկման փուլ, որի ընթացքում ևս հայտնաբերվել են առաջ եկած խնդիրներն ու թերությունները:

Փորձարկման փուլն սկսվել է սույն թվականի սեպտեմբեր ամսից և շարունակվում է մինչ օրս: Փորձարկումն իրականացվում է երեք զուգահեռ դասընթացների միջոցով, որին մասնակցում են ուսումնամեթոդական վարչության աշխատակիցները և ՎՊՀ քոլեջի դասախոսները: Երկու դասընթացում աշխատակիցները հանդես են գալիս որպես դասախոս և դասընթաց ստեղծող, իսկ մյուսում՝ որպես ուսանող:

Դասընթացների ընթացքում դասախոս-դասընթաց ստեղծողներին են ներկայացվում հեռավար ուսուցման հարթակում աշխատելու համար նախատեսված գործիքակազմը, դրանց նշանակությունները, կիրառման ոլորտներն ու յուրահատկությունները և աշխատանքի սկզբունքները: Այս դասընթացի յուրաքանչյուր դասախոս-դասընթաց ստեղծողի համար բացվում է անձնական հաշիվ, որը նրանց հնարավորություն է տալիս ստեղծել սեփական դասընթացը:

Ուսանողների խումբը անցել է մեր բաժնի կողմից արդեն ստեղծված մեկ ամբողջական դասընթաց, որի միջոցով ուսանողների խմբին ներկայացվել են համակարգի գործիքակազմի հետ աշխատելու սկզբունքները:

Ստեղծվել են դասախոս-դասընթաց ստեղծողի և ուսանողի մեթոդական ուղեցույցներ, որոնք դասընթացի ընթացքում ներկայացվել են մասնակիցներին, քննարկվել նրանց հետ, վերամշակվել և հիմա այդ ուղեցույցները գտնվում են գրեթե պատրաստի վիճակում:

Բաժնի վարիչ
27.12.2018թ.

Ն. Ստեփանյան